ՆԱԽԱԳԻԾ-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

**«----» ապրիլի 2011թ.** **N------ -Ա**

## ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N622-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետին համապատասխան.

**Երևան քաղաքի ավագանին** ***որոշում է.***

Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 1-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N983-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N622-Ա որոշմանը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի №622-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2011թ. «Ջրային Կառույցների» ՓԲԸ կառուցվածքում, աշխատակիցների թվաքանակում, հաստիքացուցակում և պաշտոնային դրույքաչափերում կատարվել են որոշակի փոփոխություններ՝ ելնելով շահագործվող օբյեկտների քանակի ավելացումից, կատարվող աշխատանքների բնույթից, գործունեության որոշ ոլորտների ընդլայնումից, 2010 թվականի աշխատակիցների փաստացի ցուցանիշներից:

2011թ. ընկերության կառուցվածքում ավելացել են պայմանագրերի կնքման, հաշվառման և վերահսկողության բաժինը և 4-րդ տեղամասը:

Համաձայն Երևանի քաղաքապետի 29.06.2010թ. «Երևանի ենթակայության «Ջրային Կառույցների» փակ բաժնետիրական ընկերությանը պայմանագրեր կնքելու թույլտվություն տալու մասին» հ.2826-Ա որոշման «Ջրային Կառույցների» ՓԲ ընկերությանը թույլատրվել է Երևան քաղաքի վարչական սահմաններում, Հրազդան և Ջրվեժ գետերի, Գետառի, Ողջաբերդի ջրանցքի, Երևանյան ջրամբարի, ջրավազանների և շատրվանների, ինչպես նաև դրանց հարակից՝ Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող հողերի պահպանման համար անհրաժեշտ աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով ջրային օբյեկտների վրա և դրանց անմիջականորեն կից տեղաբաշխված ու գործունեություն իրականացնող սուբյեկտների հետ կնքել համապատասխան պայմանագրեր: Նշված գործընթացն իրականացնելու համար ընկերությունը նախատեսել է ավելացնել 3 հաստիք, ստեղծել համապատասխան բաժին, որը կկատարի պայմանագրերի կնքում, ձևակերպում, հաշվառում, գումարների հավաքագրում:

2010 թվականի մայիսի 1-ից, համաձայն Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Տ. Մարգարյանի 23.02.2010թ. հ. 10/3057 հանձնարարականի, ընկերությունն իրականացրել է Գ. Նժդեհի անվան հրապարակի, «Շողակաթ» հ/ընկերության մոտի և Երևանյան ջրամբարի շատրվանների շահագործումն ու սպասարկումը, որը նախատեսված չի եղել 2010 թվականի ծրագրով: Շահագործման և պահպանման ծախսերը կատարվել են ընկերության միջոցների հաշվին, ստեղծվել է նոր տեղամաս: Ելնելով շատրվանների տեխնիկական սպասարկման պայմաններից՝ պահանջվում է 8 մշտական և 4 սեզոնային աշխատող:

2010 թվականի սեպտեմբեր ամսին Երևանյան ջրամբարի Հրազդան գետի հունի վրա ընկերության կողմից կառուցվել է աղբարոսիչ կայան, որը ներառվել է Երևանյան ջրամբարի ծառայության մեջ: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում կայանում կատարված աշխատանքները ցույց են տվել, որ պահանջվում է առնվազն 4 աշխատակից կայանը սպասարկելու համար:

2010 թվականի նոյեմբեր ամսին Գետառ գետի թունելային մուտքի մոտ ընկերության կողմից կառուցվել է աղբարոսիչ կայան: Նախատեսվում է տեղադրել ևս 12 նմանատիպ կայաններ: Օբյեկտների լվացման և մաքրման ծառայությունում ավելացել է բանվորի 4 մշտական հաստիք, քանի որ աշխատակիցների եղած թվաքանակը չէր բավարարի աշխատանքային սեզոնի ընթացքում կատարել շատրվանների և ջրավազանների լվացում և նշված աղբարոսիչ կայանների մաքրման աշխատանքները:

Վարչակառավարչական անձնակազմում ավելացել է մեկ կադրերի ավագ տեսուչի հաստիք, տնօրենի օգնականի հաստիքը փոխարինվել է հաշվապահի հաստիքով՝ ելնելով աշխատանքային անհրաժեշտությունից: Վարչատնտեսական ապարատում ավելացել է վարորդի 4 հաստիք, որից 2-ը տեղափոխվել է Էներգամեխանիկական ծառայությունից: Այս հաստիքների ավելացումը բացատրվում է ընկերությունում ավտոմեքենաների քանակի ավելացմամբ:

Սքեյթբորդի խաղահրապարակում ավելացել է 1 մշտական և կրճատվել են 11 սեզոնային հաստիքներ:

Նշված փոփոխությունները կատարվել են հաշվի առնելով նախորդ տարվա փաստացի պահանջվող աշխատակիցների քանակը և նախատեսվող աշխատանքների ծավալը:

2010 թվականի հետ համեմատած 2011 թվականին ավելացել է 23 միավոր մշտական և կրճատվել է 7 միավոր սեզոնային հաստիք: Աշխատավարձի ֆոնդի 18,5 մլն. դրամի ավելացումը նախորդ տարվա հետ համեմատած բացատրվում է ավելացված հաստիքների քանակով և բարձր դրույքաչափերով:

2010 թվականին աշխատավարձի ֆոնդի տնտեսում արձանագրվել է այն պատճառով, որ որոշ օբյեկտներ՝ Սքեյթբորդի խաղահրապարակ, Ե. Չարենցի աղբյուր-հուշարձան, Տիգրան Մեծի պող. 53 շենքի մոտի շատրվան, Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի հ. 3 ջրավազան, տեխնիկական պատճառներից ելնելով չեն շահագործվել, և հատկացված հաստիքները չեն օգտագործվել: Տնտեսված գումարների հաշվին ընկերությունը կառուցել է Երևանյան ջրամբարի, Գետառ գետի աղբարոսիչ կայանները, անցկացվել է Օղակաձև զբոսայգու 6-րդ հատվածի ջրավազանների 170գծմ երկարությամբ Դ-250մմ տրամագծով նոր ջրագիծ և կատարել է նորակառույց աղբարոսիչ կայանների շահագործման ծախսերը:

Ներկայումս կատարվում են 2010 թվականին չշահագործված օբյեկտների վերականգնման աշխատանքները:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N622-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 1-ի N622-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի N622-Ա ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 1-ի N622-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ